

ալ աւելի մեծ նորոգութեան մը պէտքը զգալի է, մանաւանդ սա պատճառաւ որ պատերազմի ընթացքին այս վանքը պատնէշ եղած է Պաղեստինը գրաւող անգղիական յողթապանժ բանակին՝ որուն մէկ ջոկատը հո՛ս ապաստանած՝ կռիւ մղած է ընդդէմ թրքական զինուորներուն, որ իրենց ուժաւորութիւններով աւերներ պատճառած են վանքին: Արդէն ոչինչ մնացած է վանքին վաղնջական շէնքերէն, բացի Մոզերու Կարայրիկ և Մայր Եկեղեցիէն, որուն գմբէթը դարեր յառաջ քանդուած էր, բայց հնօրեայ պատերը կը մնան, իրր նմոյշ գեղեցիկ ճարտարապետութեան մը: Ինչպէս տեսանք, միայն 3-4 վանականներ կային, և կը զբաղէին վանքին անկարևոր նորոգութիւններով. վերջնոցս ծախքը կը հոգացուէր վանքին պարտէզներուն և արտերուն արդիւնքովը, պակասը կ'ստանային Երուսաղէմի Յունաց պատրիարքարանէն: Այս վանքին կրճատեալ արարերէն անունն է Տէյր Տօղի, կը կոչուի նաև՝ Տէյր Իպև Ապէյս:

2. Թէոդոսի վանքին պատմութիւնը.

Այս վանքը հիմնած է Արբայ Թէոդոս Կապագովկիացին, Մար-Սարգայի հայրենակիցը. ա՛ն ծնած է 423ին: Բեթրայի եպիսկոպոս Թէոդոր, անոր աշակերտը, իր ուսուցչին ներթողին մէջ, կը յիշատակէ թէ Թէոդոս ծնած է Կապագովկիոյ Մոզարիոս գիւղին մէջ, որ անծանօթ գիւղ մը ըլլալով՝ Թէոդոսի շնորհիւ հանրածանօթ եղած է: Ան 451ին եկած է Երուսաղէմ. ժամանակ մը վերջ ընդհանուր վարիչ կարգուած է Գարիզմալի վանքին, (ՏԷ՛ս «Հայոց Ս. Աստուածածնի վանքը Բերդիհեռի ճակատարհին վրայ», էջ 6-12). 460ին եկած հաստատուած է Մոզերու Այր կոչուած տեղը, և հո՛ն 476ին հիմնած է վանք մը ընդարձակ հաստատութիւններով. այնպէս որ մինչև 400 վանականներ ապաստան գտած են հո՛ն. նոյն իսկ Թէոդոսի ժամանակ, վանքը աւելի ընդարձակ շէնքերով և ճոխութիւններով պայծառացած էր. հիմնադիրը աւելցուցած էր զանազան արհեստանոցներ՝ ուր վանականք կ'զբաղէին իրենց արհեստներով, և աղքատանոցներ ուր կը կերակրուէին չքաւորք և պանդուխտք: Թէոդոսի օրով, վանքը քաղաքի մը երևոյթն առած էր. ան բո-